Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 105

ք. Երևան **19.10.2023թ.**

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 14.1-րդ կետի պահանջների՝ հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2001թ. օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի» անդամների՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի 34/14.3/13311-2023, ՀՀ շրջակա միջավայրի 3/02.6/8684-2023, ՀՀ էկոնոմիկայի 03/9943-2023 նախարարությունների, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության էներգետիկայի վարչության և Կադաստրի ԱԳ/13512-2023 կոմիտեի գրություններով ներկայացրած դրական կարծիքները, ինչպես նաև Տարածքային զարգացման և շրջակա միջավայրի կոմիտեի 10.10.2023թ. նիստի թիվ ԿԱ/301-2023 արձանագրության 3-րդ կետը՝ Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ **ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Առինջ բնակավայրի հողերի** նպատակային նշանակությունը փոխելու նպատակով կազմված հողաշինարարական գործին, որով նախատեսվում է Աբովյան համայնքի վարչական սահմաններում գտնվող քաղաքացու սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության հողերից **0.16 հա** հասարակական կառուցապատման հողեր (կադաստրային ծածկագիր՝ 07-011-0223-0012) փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության:

Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Տերտերյան

քարտուղար՝ Հ. Մկրտչյան